Հավելված N 4

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ավագանու նստաշրջան

համայնքի 2026 թվականի հունիսի 23-ի թիվ [illegible] որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029թթ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓԱՐԱՔԱՐ 2026

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ——————————————————————— 3

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 4-5
2. ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ——————————————————————— 6
3. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ——————— — 7
4. ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ—— ——————————————————————— 8-9

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փարաքար համայնքի 2027-2029 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Փարաքար համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում է ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Փարաքար համայնքի հաջորդող 3 տարիների եկամուտները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Փարաքար համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ, և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Փարաքար համայնքի 2027-2029 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով:

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Փարաքար համայնքի 2027-2029 թթ.համար նախանշված ծրագրերի իրականացումը լինելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Համայնքային կառավարման արդյունավետության բարձրացում, համայնքապետարանի գործունեության թափանցիկության ապահովում և բնակչությանը լիարժեք հաշվետվողականության իրականացում:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորում՝ բնակչությանը հանրային նշանակության որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու միջոցով (հանրային քննարկումներ, հարցումներ և այլ մասնակցային գործիքներ:
5. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
6. Անվտանգ, առողջ և հարմարավետ կենսամիջավայրի ստեղծում բնակիչների ապրելու և գործունեություն ծավալելու համար:
7. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
8. Առողջապահական հաստատությունների կառուցում, վերանորոգում, բարեկարգում:
9. Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման խթանում և համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավում:
10. Բազմաբնակարան շենքերի առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում:
11. Անվճար նախադպրոցական կրթության համակարգի զարգացման, հասանելիության և ներառականության ապահովում:
12. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգումը և արդիականացում:
13. Մշակութային ենթակառուցվածքների զարգացում և մշակութային ծառայություններից օգտվելու հավասար հնարավորությունների ապահովում:

14. Համայնքի ներբնակավայրային և միջբնակավայրային ճանապարհների կառուցման, նոր կոյուղագծերի և ջրամատակարարման համակարգի վերակառուցման և պահպանման ծրագրերի շարունակականության ապահովում:
15. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:
16. Բազմաբնակարան շենքերի վերանորոգման և բարեկարգման ապահովումը:
17. Համայնքի բուժկետերի և կենցաղի տան շենքերի վերանորոգման և բարեկարգման ապահովումը:
18. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչապատման աշխատանքների իրականացումը:
19. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
20. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:
21. Գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման և գյուղատնտեսական գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման ապահովում:
22. Կարկտապաշտպան համակարգերի պահպանման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
23. Ոռոգման ցանցերի ընդլայնման, վերակառուցման և արդիականացման ծրագրերի իրականացում:
24. Խորքային հորերի պահպանման, վերանորոգման, արդիականացման և անխափան շահագործման ապահովում:
25. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման ծրագրերի արդյունավետ իրականացումը:

2. ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Փարաքար համայնքի 2027-2029թթ. վարչական եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 2086000,0 2265600,0 և 2400000,0 հազ. դրամ:
Հատկանշանական է, որ ընդամենը եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում, մասնավորապես հարկ է նկատել Փարաքար համայնքի սեփական եկամուտների դինամիկան, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածով սեփական եկամուտների կազմում հիմնանական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի, տեղական տուրերի և վճարների եկամտատեսակից:

Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները կանխատեսվել են 2027թվականի համար 337549.0հազ դրամ

3. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փարաքար համայնքի 2027-2029թթ. եկամուտների կազմում՝ սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 899918.945, 929518.945, և 963918.945, հազ. դրամ 3 տարվա կտրվածքով:

2027-2029 ՄԺԺԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

1. Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 262087.745, 292087,745 և 302087,745 հազ. դրամ
2. Գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 312300.0, 335400.0 և 350000.0 հազ. դրամ
3. Տեղական տուրքերը՝ 94732.544, 98532.544, և 98532.544, հազ. դրամ
4. Այլ եկամուտներ՝ 184998.7, 188797.7 և 203598.7 հազ. դրամ
5. Աղբահանության գծով վճարը՝ 68400.0, 70000.0, 72300.0,հազ. դրամ

Պետության կողմից տրամադրվող հատկացվող շնորհները՝ այդ թվում սուբվեցնիաները և ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան, նախնական կանխատեսմամբ նախատեսվում է համապատասխանաբար 1186081.1 հազ.դրամ, 1336081.1 հազ. դրամ և 1436081.1 հազ. դրամ:

4. ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ

Փարաքար համայնքի 2027-2029թթ. վարչական ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 2086000,0 2265600,0 և 2400000,0 հազ. դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսերի քաղաքականության և նպատակներին հասնելու սկզբնաղբյուրն է հանդիսանում լուծել համայնքի առջև դրված կայուն զարգացման պահանջը՝ մշակելով և կատարելով դրա իրագործմանն ուղղված բյուջետային ծրագրերը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը 2027թ., 2028թ. և 2029թվականների համար կայանում է Փարաքար համայնքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում հանգած խնդիրների լուծման տեսլականներով, մասնավորապես դրանք բաշխված են հետևյալ կերպ.

Վարչական մասի ծախսեր

1/ պետական կառավարման ապարատի պահպանման ընթացիկ ծախսերի ֆինանսավորում 570164.0 հազ. դրամ, 649364.0հազ. դրամ, 713484.0 հազ. դրամ

2/ ընդհանուր բնույթի և աշխատանքի հետ կապված ծառայությունների համար ֆինանսավորում՝ 86700.0 հազար դրամ, 93700.0 հազ. դրամ, 98700.0 հազ.դրամ

3/ Քաղաքացիական պաշտպանություն համար ֆինանսավորում՝ 11990.0 հազ. դրամ, 12990.0 հազ. դրամ, 12990.0 հազ. դրամ

4/ Գյուղատնտեսություն ոլորտի համար ֆինանսավորում՝ 2000.0հազար դրամ, 2000.0հազ. դրամ, 2000.0 հազ. դրամ

5/ Ոռոգման ոլորտի համար ֆինանսավորում՝ 4000.0.0հազար դրամ, 4000.0հազ. դրամ, 5500.0 հազ. դրամ

6/ Տրանսպորտի ոլորտի համար ֆինանսավորում՝ 10000.0 հազար դրամ, 14300.0 հազ. դրամ, 21500.0 հազ. դրամ

7/ Աղբահանության ապահովման համար ֆինանսավորում 290200.0 հազ. դրամ, 314000.0 հազ. դրամ, 346260 հազ. դրամ

8/ Կեղտաջրերի հեռացում կատարվող ծառայությունների ֆինանսավորում՝ 39890.0 հազ. դրամ, 39890.0հազ. դրամ, 39890,0հազ. դրամ

9/ Ջրամատակարարման ապահովման համար ֆինանսավորում՝ 20000.0 հազ. դրամ, 20000.0 հազ. դրամ, 20000,0 հազ. դրամ

10/ փողոցների լուսավորության ապահովման համար ֆինանսավորում՝ 85000.0 հազ. դրամ, 130000.0հազ. դրամ, 156620.0 հազ. դրամ

11/ հանգստի և սպորտի ծառայությունների ծախսերի ֆինանսավորում՝ 34000.0 հազ. դրամ, 39000.0հազ. դրամ, 44000.0 հազ. դրամ

12/ մշակույթի տների և գրադարանների գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում՝ 138000.0 հազ. դրամ, 138000.0հազ. դրամ, 138000.0 հազ. դրամ

13/ Նախադպրոցական կրթության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում՝ 485000.0 հազ. դրամ, 500000.0հազ. դրամ, 485000.0հազ. դրամ

14/ Արտադպրոցական կրթության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում 97300.0 հազ. դրամ, 97300.0 հազ. դրամ, 97300.0հազ. դրամ,

15/ սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ֆինանսավորում՝ 16000.0 հազ. դրամ, 16000.0հազ. դրամ, 24000.0 հազ. դրամ

16/ համայնքի պահուստային միջոցներ 195756.0 հազ. դրամ, 195756.0հազ. դրամ, 195756.0 հազ. դրամ

Նշված ոլորտներում ծախսերը կանխատեսվել են հաշվի առնելով վերջին տարիների փաստացի ցուցանիշները և 2027թ., 2028թ. և 2029թ. տարեկան աշխատանքային ծրագրերը:

Բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման նպատակով համայնքում 2027թվականի համար ծրագրվել են կատարելու հետևյալ կապիտալ աշխատանքները:

Ֆոնդային մասի ծախսեր

1/ Ճանապարհների ասֆալտապատում՝ 164494.0 հազ. դրամ:

2/ Կեղտաջրերի հեռացում կատարվող կապիտալ ֆինանսավորում՝ 96000.0 հազ. դրամ:

3/ Ջրամատակարարում և ջրահեռացում՝ 79054.0 հազ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ